տեղ վարած առաջնորդական պաշտօնի յաջորդին էլ մի վայելուչ ուռճիկ կը յատկացուի»։

30 Հոկտեմբերի 1800 ամի հրովարտակով հրամայւում էր Աժտարխանի նահանգապետ գեներալ-Լէյտենանտ Կնորրինգին՝ «Հայրապետին մինչև Թիֆլիս հասցնելու համար տալ նրան մի վայելուչ յուղարկաւոր վաշտ կազակների աւագ սպայով, որ կարենար ծառայել նրան իբրև պրիստաւ (յանձնակատար)»։

Բարձրագոյն հրովարտակը, օսմանեան դրան բերաթն և միւս թղթերը հասան Յովսէփ կաթողիկոսին Աժտարխանում 18 Նոյեմբերի, և այնուհետև նա ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին։ Սահմանամերձ Մոզդոկ քաղաքը ժամանելուց յետոյ նա 18 յունուարի 1801 թ. մի նամակ առաքեց Բոստոպչին կոմսին, որով դարձեալ շնորհակալութիւն էր յայտնում իւր գտած կայսերական շնորհների փոխարէն։ Այդ նամակը հետևեալ խօսքերով է վերջանում. «եթէ Նորին Կայսերական Մեծութեան Ամենաողորմած թագաւորին երբ հիցէ հաճոյ թուի իւր ողորմած հայեցուածքը դարձնել Արարատեան նահանգի և իմ հայրապետանիստ Էջմիածնի մենաստանի, իւր խոնարհ ու հաւատարիմ աղօթարարի վերայ, կարելի է պատուարել նրանց թշնամիների յարձակումից մի զօրաբաժնով, որի վրայ, ըստ իս, լաւ կըլինէր հրամանատար նշանակել այն Երկիրն և ազգերի բարքն ու վարքը լաւ ճանաչող հեծելազօրի գեներալ Սաւելյևին»։

Բոստոպչին կոմսն իւր կողմից՝ ըստ բարձրագոյն հրամանի գրում էր Հայրապետին (11 յունվ. 1801), թէ «Վեհափառ Կայսրը հաւատալով հաւատում է Ձեր երախտագիտութեան ցոյցերին և Ձեր անկեղծ հաւատարմութեան իւր գահին, մանաւանդ որ դուք այդ բոլորը նշանաւոր գործերով հաւաստած էք, վասնորոյ և առանց բնաւ երկրայելու կարող էք ապագային ևս յոյս դնել նրա արքայական բարեհաճութեան և հովանաւորութեան վրայ, որոնք Ձեր մասնաւոր անձնուիրութեան պատճառով յատուկ Ձեր անձին և համայն ազգիս հայ ազգի վրայ տարածուած կըմնան»։

Հայրապետը Թիֆլիս ժամանեց 10 փետրուարի 1801 ամի։ Գէորգ թագաւորին այլ ևս կենդանի չգտաւ։ Գեներալ Մայոր Լազարևը 11 փետրուարի ծանուցանում էր գեներալ Մայոր Կնորինգին. «Նորին Սրբութիւնը հայոց Յովսէփ Հայրապետն

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան